# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» նոյեմբերի 2020 թվականի N 363

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 4-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆ 19 ՓՈՂՈՑ ԹԻՎ 9, 4-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆ 19 ՓՈՂՈՑ ԹԻՎ 7 և 4-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9/1 ՀԱՍՑԵՆԵՐԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի 4-րդ միկրոշրջան 19 փողոց թիվ 9 հասցեի բնակիչներ՝ Վլադիմիր Յուրիկի Մշեցյանի /ծնված 15.06.1975թ., անձնագիր 000735399, տրված 09.08.2013թ., 053-ի կողմից/ և Արմենուհի Ռազմիկի Մշեցյանի /ծնված 22.11.1976թ., անձնագիր AM0765071, տրված 08.06.2012թ., 053-ի կողմից/ կողմից ներկայացված համատեղ դիմումը՝ ք.Ստեփանավան 4-րդ միկրոշրջան 19 փողոց թիվ 9, 4-րդ միկրոշրջան 19 փողոց թիվ 7 և 4-րդ միկրոշրջան Ա.Խաչատրյան փողոց թիվ 9/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերի միավորման արդյունքում առաջացած անշարժ գույքի հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, միավորված հողամասի վրա նրանց կողմից ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու և նոր փոստային հասցե տրամադրելու խնդրանքը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, 17.09.2013թ. թիվ 17092013-06-0013, 06.11.2013թ. թիվ 06112013-06-0010 և 10.11.2020թ. թիվ 10112020-06-0013 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները, նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում

րկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ*.

1. Ճշտել թիվ 17092013-06-0013 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն պետական գրանցում ստացած ք.Ստեփանավան 4-րդ միկրոշրջան 19 փողոց թիվ 9 հասցեի անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը, որը համաձայն կադաստրային քարտեզի գտնվում է 06-007-0134-0011 կադաստրային ծածկագրի տակ:
2. Ճշտել թիվ 06112013-06-0010 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն պետական գրանցում ստացած ք.Ստեփանավան 4-րդ միկրոշրջան 19 փողոց թիվ 7 հասցեի անշարժ գույքի կադաստրային ծածկագիրը, որը համաձայն կադաստրային քարտեզի գտնվում է 06-007-0134-0012 կադաստրային ծածկագրի տակ:
3. Ճշտել՝ թիվ 17092013-06-0013, թիվ 06112013-06-0010 և թիվ 10.112020-06-0013 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների համաձայն պետական գրանցում ստացած և միավորման արդյունքում առաջացած անշարժ գույքի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագիծի և 0.20056 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել՝ Վլադիմիր Յոսիկի Մշեցյանի և Արմենուհի Ռազմիկի Մշեցյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
4. Օրինականացնել Վլադիմիր Յոսիկի Մշեցյանի և Արմենուհի Ռազմիկի Մշեցյանի կողմից իրենց սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0.20056 հա մակերեսով միավորման արդյունքում առաջացած հողամասում ինքնակամ կառուցված՝ 18.63 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի մասը, 12.21 քմ արտաքին մակերեսով հավանոցը, 12.11 քմ մակերեսով ծածկարանը, 6.65 քմ մակերեսով պարիսպը և 5.34 քմ մակերեսով պարիսպը:
5. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 18.63 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի մասի համար 16022.0 /տասնվեց հազար քսաներկու/ ՀՀ դրամ, 12.21 քմ արտաքին մակերեսով հավանոցի համար 10501.0 /տասը հազար հինգհարյուրմեկ/ ՀՀ դրամ, 12.11 քմ մակերեսով ծածկարանի համար 10420.0 /տասը հազար չորս հարյուր քսան/ ՀՀ դրամ, 6.65 քմ մակերեսով պարիսպի համար 5720.0

/հինգ հազար յոթ հարյուր քսան/ ՀՀ դրամ, 5.34 քմ մակերեսով պարիսպի համար 4593.0 /չորս հազար հինգ հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամ:

6. Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման ընդհանուր վճարը, որը կազմում է 47256.0 /քառասունյոթ հազար երկու հարյուր հիսունվեց/ ՀՀ դրամ, վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001407 հաշվեհամարին:
7. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
8. Օրինական ճանաչել բնակելի տան 1-ին հարկի ներսում կատարված փոփոխությունները:
9. Համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծերի միավորված հողամասում, պետական գրանցում ստացած՝ բնակելի տան 2-րդ հարկի, ամառային խոհանոցի, ծածկի և 10.31 քմ մակերեսով պարիսպի նկատմամբ փոփոխություններ իրականացված չեն:
10. Հաստատել վերը նշված հասցեների միավորման արդյունքում առաջացած՝ 0.20056 հա մակերեսով հողամասի և հողամասի վրա կառուցված շենք, շինությունների նոր փոստային հացեն՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան 4-րդ միկրոշրջան Ա.Խաչատրյան փողոց թիվ 9 բնակելի տուն:
11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«18» նոյեմբերի 2020 թվականի N **364**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0045-0040 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 62 /ՆԱԽԿԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ՝ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 62 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան քաղաքի Անտառային փողոց 3-րդ նրբանցք թիվ 15 հասցեի բնակիչ Սպարտակ Արտաշեսի Ասրյանի կողմից ներկայացված 16.11.2020 թիվ Ա-351 դիմումը, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 09.10.2020 թվականի գործ թիվ ԼԴ1/0779/02/20 վճիռը, 18.09.1985թ. կազմված տեխնիկական անձնագիրը, 18.03.1985թ. կազմված տեխնիկական անձնագիրը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան 06-007-0045-0040 ծածկագրում գտնվող 538.8 քմ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան քաղաքի 06-007-0045-0040 ծածկագրի հողամասի մակերեսը 538.8 քմ

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 538.8 քմ մակերեսով հողամասից 522.0 քմ /համաձայն վերը նշված տեխնիկական անձնագրերի՝ 72.0 քմ և 450.0 քմ/ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված

հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Սպարտակ Արտաշեսի Ասրյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 16.8 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Սպարտակ Արտաշեսի Ասրյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան, անասնաշենքի և պարիսպի նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:

3. Ստեփանավան քաղաքի 06-007-0045-0040 ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 69.72 քմ ներքին մակերեսով բնակելի տան նկուղի, 68.28 քմ ներքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 9.0 քմ մակերեսով բաց պատշգամբի, 13.78 քմ մակերեսով աստիճանանահարթակների, 24.35 քմ ներքին մակերեսով անասնաշենքի և 7.39 քմ մակերեսով պարիսպի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Սպարտակ Արտաշեսի Ասրյանի սեփականության իրավունքը:
4. Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Գ.Նժդեհի փողոց թիվ 62 բնակելի տուն:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2020 թվականի N 365

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0723-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժիրիկ Միքայելի Հովհաննիսյանի կողմից ներկայացված 19.11.2020թ. թիվ Հ-364 դիմումը, 27.03.2009թ. թիվ 2498628 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի 06-007-0723-0008 կադաստրային ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան, Արմանիս թաղամաս 4-րդ փողոց թիվ 3 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» նոյեմբերի 2020 թվականի N 366

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 62/7 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 20.11.2020թ. թիվ 20112020-06-0021 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Ստեփանավանի համայնքապետարանի ճարտարապետական խորհրդի արձանագրությունը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, ՀՀ կառավարության 2006թ. Մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Թումանյան փողոց 62/7 հասցեում 06-007-0303-0021 ծածկագրում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 26.72 քմ ընդհանուր արտաքին մակերեսով ավտոտնակի շենքը 22980 /քսաներկու հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամով և շինությամբ զբաղեցված և սպասարկման համար նախատեսված ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 33.8 քմ մակերեսով հողամասը կադաստրային արժեքի սահմանված չափով՝ 17847 /տասյոթ հազար ութ հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Րաֆֆի Անդրանիկի Ղարիբյանին:

2. Ավտոտնակի համար օտարման գումարը անհրաժեշտ է վճարել համայնքապետարանի 900255001407 հաշվեհամարին, իսկ հողամասի օտարման համար կադաստրային արժեքի վճարման գումարը անհրաժեշտ է վճարել համայնքապետարանի 900255101371 հաշվեհամարին:
3. Համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման բաժնին մեկամսյա ժամկետում Րաֆֆի Անդրանիկի Ղարիբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:
4. Պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» նոյեմբերի 2020 թվականի N **367**

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵՈՎ ԵՎ 06-007-0230-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հասմիկ Ռոստոմի Մանասյանի կողմից ներկայացված 20.11.2020թ. թիվ Մ-365 դիմումը և 17.06.2020թ. N 17072018-06-0001 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 -րդ հոդվածի 1 -ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան քաղաքի Խորենացու փողոց թիվ 26 հասցեով՝ բնակավայրերի նպատակային նշանակության և բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տանը և օժանդակ շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Չայկովսկի փողոց թիվ 29:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ** **Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ**